ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. մարտի 6-ից 9-ը Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Արմեն Ղազարյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները. Աբու Դաբի, 2023թ. մարտի 6-9-ը

4. Հրավիրող կողմը. «VFS Global» կազմակերպություն, որը վիզաների և տեխնոլոգիական ծառայությունների տրամադրման աշխարհի խոշորագույն մասնագիտացված կառույց է՝ կառավարությունների և դիվանագիտական առաքելությունների համար:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցելու «iConnect» 8-րդ տարեկան նորարարական համաշխարհային աշխատաժողովին

6. Քննարկված թեմաները.

«iConnect»-ը եզակի հարթակ է, որը միավորում է առանցքային պետական պաշտոնյաներին ամբողջ աշխարհից՝ մտքեր փոխանակելու և քննարկեու վիզաների, անձնագրերի և հյուպատոսական ծառայությունների ոլորտում նոր զարգացումներն ու միտումները: Այս տարվա աշխատաժողովի թեման էր՝ «Վերամիացեք, թարմացրեք, վերահայտնագործեք (Reconnect, Refresh, Reinvent)», որի ընթացքում քննարկվում էր դինամիկ միջավայրում ճկուն մնալու կարևորությունը՝ կենտրոնանալով նոր ծառայությունների, սպառողների վարքագծի փոփոխության և նոր տեխնոլոգիաների վրա:

Քանի որ ներկայումս Հայաստանում միգրացիայի ոլորտում ընթանում են կառուցվածքային բարեփոխումներ, ինչպես նաև այս ոլորտում ծառայությունների տրամադրման թվայնացումը գերակա ուղղություն է, ուստի մասնակցությունն

աշխատաժողովին օգտակար էր նորարարական և առաջադեմ լուծումներ գտնելու՝ միգրացիայի, անձնագրերի, վիզաների և ոլորտում առկա բոլոր գործընթացների թվայնացման և նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակով: Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են նաև հյուպատոսական և անձնագրային ծառայությունների արտապատվիրման հարցերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետն առանձին հանդիպումներ է ունեցել «VFS Global» կազմակերպության տարածաշրջանային ղեկավար Նիշան Բհաթիայի, գլխավոր առևտրային տնօրեն Ջայթն Վայեսի և կազմակերպության գործադիր տնօրեն Ադիթյա Արորայի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Չկան

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Չկան

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

13.03.2023թ.